որդւոցմէ՝ որ անհաւատ պիտի լինին, Աստուած ըլլայ անոնց փրկիչ ամենեղու թեանց մէջ, և նորա երեսը սիրով զատէ զանոնք, և հեղութեամբ փրկէ զանոնք, և օգնական ըլլայ երկար օրերով »(1)։

Խիստ ճշմարիտ է, Տէր իմ, որ այն որդիքն զոնց համար է մեր խօսքը, հաստատուն մնացին միշտ. և այն ժամանակէն ի վեր որ այն արդար թագաւորն և անոնց վարդապետը զկրենք աղաւոց, բնաւ երբէք զանոնք Աստուած ձեռքէ չթողուց։ Այլ զմեզ թողուց, և անոնց հետ եղաւ միշտ. և այն որդւոց՝ այսինքն Առաքելոց համար ըսաց խմաստուն Յեսու Սիրաքայ որդին Գ գլխոյն մէջ. «Ականջ դրէք սիրելի որդիք, և ըրէք՝ որ ապրիք. վասն զի Աստուած զհայրերն որդւոց վերայ կը պատուէ »(2)։ Իւ այն պատիւն որ խօսքով պէտք է մեզ ի մտնամք, ահա նոյնը կը յայտնէ Աստուած Մաղաքիա մարգարէի բերանովն Գ գլխոյն մէջ. «Աստուած զՀշկան սիրտ խրկէ որ մեր հայրերուն սրտերն որդւոց վերայ հաստատէ »(3)։

Ով Տէր, պրովէտեսէ պէտք է որ այն խօսքը հաւատոց մասին իմանամք, թէ Աստուած որդւոց սրտերն այսինքն Առաքելոց դէպ ի հայրերն կը դարձնէ, հիմայ այն որդիքն այսինքն առաքեալները մեզ հետ այս անվախճան գերութեան մէջ պիտի ըլլան, ինչպէս որ մեր հայրերն ու մեք անոր մէջ եմք։ Բայց երբ Աստուած ահմանեց որ հայրերուն սրտերը պէտք է որ դէպ ի որդիքը դառնան, ինչ է այն որոնք կը ապասեմք, Տէր իմ, և որոնք կը յուսամք։ Թէ որ ուզեմք ըսել՝ թէ Առաքեալները չէ, այլ ուրիշ մարդիկ պէտք է որ լինին որդիք ըսածը, ուրեմք այլ ըլլան այն մարդիկը, անոնց պէտք է որ մեզ նման գերութեան մէջ ըլլան, որովհետեւ այն Էջդարոյն ճանապարհին չհետեւեցան. այլ Առաքեալները հետեւեցան նոյն Էջդարոյն շաւղաց հաստատուն կերպով, և ուսուցին թէ այնց եւս պէտք է որ անոր հետեւին. և ասոր համար հօր պատիւ ունին, ինչպէս որ ըսուեցաւ՝ թէ հայրերն դէպ անոնց դառնան։

Ի յաջորդն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Նիկոյ ամսոյ 21 ին Յոսեպ էֆենտի Մինչեւ Այրուսաղէմ շինուելիք ճանապարհին սկիզբն տրուեցաւ հանդիսիւ։ Այն օրը՝ հինգշաբթի առաւօտուն Վսեմ. Նազիֆ փաշայն անձամբ գնաց հոն հրաւիրելով թէ քաղաքի գլխաւոր աւագանիքը և թէ օտար տերութեանց հիւպատոսները, որոնք բաց ի Ռուսաց հիւպատոսէն փութացին ներկայ գտնուիլ հանդիսին։ Օմարայ Տաճարին առաջին քարտարաշ մեծ շէյխը նախ օրհնութիւն մի կարդաց հրապարակաւ, որոյ լսմանցուն Վսեմ. Փաշայն կացինը ձեռքն առած առաջին հարուածը տուաւ, որոյ հետեւեցան միւս պաշտօնատարքը, հիւպատոսք,

(1) Այն վկայութիւնը բան առ բան չկայ աւրբ գրոց մէջ տեղ մի. այլ միայն Խաչեաց կգ. գլխոյն 8 և 9 համարներն ասոնց մնաց համաձայն են. «Եւ ապաց՝ եթէ ժողովուրդ իմ են որդիքն իմ. և ոչ ստոգեցցեն զիս. և եղեւ նոցա ի փրկութիւն յամենայն նեղութենէ նոցա։ Ոչ պատգամաւոր ոք և ոչ հրեշտակ։ այլ ինքնին Տէր փրկեաց զնոսա. վասն սիրելոյ զնոսա և խնայելոյ ի նոսա ինքնին փրկեաց զնոսա. և վերացոյց և բարձրացոյց զամենայն աւուրս յաւիտենից »։

(2) Լուծ հօրս լուարուք որդեակք, և զայս ապրասջիք զի ապրեսջիք։ Զի Տէր փառաւորեաց զերկայր ի վերայ որդւոց, և կիրաւունս հօր հաստատեաց յորդիս։ Սիր. Գ. 1. 2։

(3) Եւ ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբացի. մինչեւ եկեալ է օր Տեառն մեծի և երեւելւոյ. որ պատրաստեսցէ զսիրտս հօր առ որդի։ Մաղ. Գ. 5, 6։

digitised by A.R.A.R.@

թարգմանք և հան գանուլոյ երեւելիք։ Այն միջոցին ոչխար մի եւս ը-ը-պան ըմբին վասն բարեյաջողութեան գործոյն։ Յետ այնորիկ փաշայն և հրամայեցին մեզ ամենիս վրանին տակ հանգստանալու երթալով, որքունի զօրաց տուեցաւ կացինները ու բահերը, որոնք երկու կարգ շարուած ուղղագծի վերայ, սկսան ուշխատիլ, և երաժշտաց խաւմբն եւս ներդաշնակութեամբ կ'եղանակէր խրախոյս տալով աշխատաւորաց։

Յիշեալ ճանապարհը՝ ինչպէս որ կը կարծուէր, արքունի գանձէն չպիտի շինուի, այլ գեղացւոց և քաղաքացւոց աշխատութեամբն և անոնց օգնութեամբը. վասն զի որոշեցաւ որ իւրաքանչիւր այր մարդիկ թէ մեծ և թէ պզտիկ, հինգ հինգ օր բանելու երթան, իսկ չկրցող երթողը 30 ղուրուշ հատուցանէ։ Այն որոշումն ի գործ դրուեցաւ անխափար ամեն հպատակ ժողովուրդներու վերայ հարկ դնելով կամ անձամբ բանելու և կամ տուրքը վճարելու։ Կրաւի թէ ճանապարհին շինութիւնը աւարտելէն յետոյ, ընկերութիւն մի եւս պիտի կազմուի կառքեր բերել տալու և բանեցընելու համար, որուն ի պատճառ բարեմաղթութեամբ աջողութեանը և գործադրութիւն։

—Յապպէի Ամերիկացի գաղթականաց վերայ ի ժամանակին տեղեկութիւն տուինք մեր արդէն ընթերցողաց, և արդ ճիշդ տարի մի է անոնց հատատութիւնը, որոնց միամեայ աշխատանաց և ընթացից վերայ հետեւեալ կերպիւ կը գրէ մեզ մեր մեծապատիւ թղթակիցն պարոն Արապեան Յ. Մուրատեանը, որ գաղթականութեան հետ մօտաւորապէս յարաբերութիւններ եւս ունի։ "Արդարեւ գովողութեան արժանի է, կ'ըսէ, աշխատասէր մարդկանց մէկ տարուան շրջանին մէջ և այն ալ իրենց բոլորովին օտար և անծանօթ երկրի մը մէջ գլուխ տարած գործերին։ Գնակութեան տեղերին՝ որ քաղաքէս հինգ տասը բոպէ հեռու է, ամենազարմանալի տեսարան մը կը ներկայացընէ թէ տեղացւոց և թէ օտարաց։ Քանի հնգի չափ արդէն տախտակեայ տներ շինած են, որոնց ամենն ալ ինչ ճարտարութեամբ և գործունէութեամբ շինուիլը կարծես թէ յայտնապէս տեսնողին կ'ազդէ։ Այս տներուն ամենն ալ կրկնայարկ են, բաց ի հինգ վեց տներէ՝ որ միայարկ են, և բոլորն ալ ներսէն ու դրսէն կիրով ծեփուած։ Ունին ժողովարան և փարժարան, ինչպէս նաեւ եռայարկ հիւրանոց (հոտէլ) մի գեղեցիկ և վայելչադիր, որուն մէջ քանի չափ սենեակ կան։ Գովողութեան արժանի է իրենց մէջ տիրած կարգաւորութիւնը։ Ունոնք որ իրենց նախագահին միջնորդութեամբ շատ մի տարեր վարձու բռնած էին, ժամանակին զանոնք իրենց մատնաւոր գործիքներով վարեցին և ամեն տեսակ բարիք ցանեցին ու քաղեցին։ Այս տարի թէեւ գարնին քիչ մի ակար է, բայց ցորենն և ուրիշ արմտիքները շատ լաւ են։ Ունին հնձելու և ցորենը մաքրելու ընտիր գործիքներ, որոնց աբաղութիւնն այս տարի շատ մեծ օգուտ բերաւ թէ իրենց և թէ ի վարձու բռնած մարդոց։

"Թէպէտեւ անցեալները մէջերնին մի քիչ գժտութիւն ու խռովութիւն ծագեցաւ, բայց այսպիսի նոր հատատութեան մի ծանր պարագայից մէջ երբեւին ծագած անհամաձայնութիւնները մեղադրելի չեն, մանաւանդ երբ անոր պատճառն եկամուտ է և ոչ ներքին։ Իմակ գրեթէ անհետացած է խռովութիւնը, որոնց պատճառ եղող անձինք արդէն իրենց

digitised by A.R.A.R.@

հայրենիքը վերադարձան։

«Թէ բնակչաց և թէ տեղական կառավարութեան հետ խիստ սիրով են. իրենց նախագահը Պ. Ամսամ խոհեմ ու բանիբուն անձ մը ըլլալով, ամենուն համակրութիւնը ստացած է. իր քաղաքագիտութեամբն ու ճարտարիոստութեամբ և ամենապարզ վարմունքովը թէ մեծին և թէ պզտիկին, թէ հարուստին և թէ աղքատին սրտին մէջը տեղ գտած է։ Վերջապէս ուրախ եմ լսելու՝ որ այս առաջին մէկ տարուան մէջ այս երկրին մէկ մասը փոքր ի շատէ ինչպէս կը յուսայինք յառաջադիմութիւն ստացաւ յիշեալ աշխատասէր գաղթականաց մէջ։ Ես յուսով եմ որ օր բան զօր յառաջանալու դիւրութիւններ պիտի կարենայ գտնել։

«Ամսոյս 5/17 ին, (կը յարէ մեր թղթակիցը,) ի նաւահանգիստս հասան Ամերիկայի Ռուէյքը Սիմի շոգենաւը, որով ութսունի չափ հարուստ Ամերիկացիք աշխարհիս դիւաւոր ու նշանաւոր տեղերը պտտելու եկած են։ Այս ճանապարհորդներէն ոմանք Պերութիւն Դամասկոսի վրայօք և ոմանք Հայֆայէն՝ Նապարեթի և Նապլուսի վրայօք սուրբ Երուսաղեմ եկած են. իսկ մնացեալներն ուղղակի շոգենաւով Յոպպէի նաւահանգիստն եկան ուրկէ դիւրութեամբ պտտելու Երուսաղեմ և ուրիշ նշաւոր տեղերը։ Ամսոյ մէջն է Տոքթոր Վիլեէմ Կիսպան հմուտ քաղաքագէտը, որ Ամերիկայի Միացեալ նահանգաց կառավարութենէն Սիոյ, Իւրոպիոյ և Աֆրիկէի քննիչ և գործակատար անուանուած է։ Այժմ Ամերիկայի փոքր ֆրեկատ մ՚ալ կը գտնուի նաւահանգիստս Պոլիսէն գալով ամսոյս 13/25, որոյ անունն է Սբանոնատա, և ակէ ի Պերութ երթալու է»։

Վերոյիշեալ Ամերիկացիք եկան ի սուրբ քաղաքս և հարկաւոր տեղերը պտտելէն յետոյ, ամսոյս 18 ին դարձան ի Յոպպէ, ուսկէ պիտի երթան Ալէքսանդրիա, և անկէ Մալթա, Ռիպրալթար և Պրանիոյ ուրիշ մէկ քանի նաւահանգիստները հանդիպելէն յետոյ պիտի վերադառնան ի Նիւ Եորք, ուսկէ որ եկած են։

ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Սուրբ Ամենայն Թանգարանին և տպարանին Տեսուչ Ա. Յ. Ամատիս վարդապետն անցեալ ամսոյն մէջ ի Պոլիս բրած ճանապարհորդութեան առթիւ, բարեհաճած է ստորագրեալ գեղեցիկ դիտակ մի Թանգարանին նուիրել։ Անձապատիւ Միասակ Աբեղայ պէյն Յ. Տատեան։ Այնպէս երկու կոտոր հին ժամանակէ մնացած զէնքեր, որոնց մէկին է պղնձապատեայ կայցին և միւսն շերտաւոր լոմտի ձեւով զէնք մի, երկուսն ալ ակէնկար գիծերով զարդարուած ու քանդակուած։ Այս զէնքերս նորին Անձապատիւ ծախիւք ի Փարիզ փոխադրուելիւն ապրող յարգոյ պարոն Պէնոէրեանը Փարիզէն ետ դառնալուն Այգիպտոս հանդիպելով, հոն իր բարեկամին մէկին իրեն կը շնորհէ. և պարոն Պէնոէրեան զանոնք իբրեւ պատուական և հնագիտական հնութիւններ իր բարերարին պարգեւած ըլլալով, այս անգամ այն բարեպատեհ առթիւ Անձապատիւ ազգասէր Պէյը զանոնք եւս Թանգարանիս կրնուիրէ ի յիշատակ Պարոն Պէնոէրեանի, որոնց համար կը պարտաւորիմք հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել ի գիմաց Թանգարանի Տեսչութեան։

— Սակայն դրեթէ երկու տարի յառաջ ի Հալէպ բնակող Անձայարգ Յովհաննէս աղայն Թիւրքէնեանցի 5—6 կոտոր ձեռագիր գրեանք խրկած էր Թանգարանիս համար, որոնց մէջ երկու կոտորն է Ընտան Այլաբանութիւն բուսած գիրքը. սոնց համար եւս թէպէտ և անագան, բայց երախտագէտ սրտիս կը յայտնէ իր շնորհակալութիւնը։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐԵԼ

ՊՈՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՋՄԻԱԾՆԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՍԱՅԻ ՄԱՐԴԱՊԵՏՈՒՆ

digitised by A.R.A.R.@